«SECONDARY SCHOOL EDUCATION IN ARMENIA, AZERBAIJAN AND GEORGIA TO CONTRIBUTE TO THE PREVENTION OF TRAFFICKING IN PERSONS»

regional project

ԵՐԵՎԱՆ 2010

«Մարդկանց առևտուրը կանխելուն ուղղված դպրոցական կրթություն Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում» տարածաշրջանային ծրագիր

Armenian UN Association

«Կրթություն հանուն կայուն զարգացման» հիմնադրամ
Education for Sustainable Development Foundation

HELSINKI CITIZENS ASSEMBLY

IOM • OIM

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

Գրքույկում տեղ գտած գրական ակնարկներն ու նկարչական աշխատանքները պատրաստել են թրաֆիքինգի մասին քարոզարշավի շրջանակներում կազմակերպված մրցույթների մասնակիցները՝ Երևանի հետևյալ ստեղծագործական ակումբներից և դպրոցներից.

- «Շավիղ»
- «Արևածաղիկ»
- Արաբկիրի հայորդաց տուն
- Խնկո Ապոր անվան գրադարան
- «Փյունիկ» հաշմանդամների միություն
- «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
- Գեղագիտության ազգային դպրոց
- Հակոբ Կոջոյանի անվան կրթահամալիր
- Թիվ 78 դպրոց
- ՄԱԿ-ի Հայկական ասոցիացիա
- Ա. Շահինյանի անվ. ֆիզիկամաթեմատիկական դպրոց

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս հրատարակության որևէ մաս չի կարող վերարտադրվել կամ տարածվել էլեկտրոնային կամ մեխանիկական միջոցներով, ինչպես նաև լուսապատճենահանվել, պահվել տվյալների բազայում կամ որոնման համակարգում առանց հրատարակչի՝ նախօրոք գրավոր թույլտվության:

Այստեղ զետեղված կարծիքները կարող են չհամընկնել Միգրացիայի միջազգային կազմակերպության (IOM) անդամ պետությունների, Շվեյցարիայի Զարգացման և համագործակցության գործակալության (SDC) պաշտոնական տեսակետների հետ:

Ակնարկների այս հավաքածուն հրատարակվել է **«Մարդկանց առևտուրը կանխելուն ուղղված դպրոցական կրթություն Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում»** տարածաշրջանային ծրագրի շրջանակներում, որն իրականացնում են ՄԱԿ-ի Հայկական ասոցիացիան, «Կրթություն հանուն կայուն զարգացման» հիմնադրամը և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հայկական կոմիտեն Միգրացիայի միջազգային կազմակերպության և Շվեյցարիայի Զարգացման ու համագործակցության գործակալության աջակցությամբ:

Ընթերցողին

Այս գրքույկի էջերում տեղ գտած նյութերն ու պատմություններն աչքի չեն ընկնում վառ գույներով, հեքիաթի հերոսների սխրագործություններով, լավատեսությամբ և հոլիվուդյան ֆիլմերի «երջանիկ» ավարտով: Գույները մի քիչ խտացված են, մանկական կենսախնդության ձայներ գրեթե չեն լսվում, սիրտ ծակող տողեր շատ կան. ամենը շատ հորինված, բայցև շատ իրական: Դե, դժվար որևէ մեկը թրաֆիքինգը բնորոշի որպես բարեգթության և հոգատարության հոմանիշ և գրի մարդասիրության անվախ տողեր: Թրաֆիքինգը մարդկության դեմ է: Եթե այն համեմատենք, ապա միայն զանգվածային ոչնչացման զենքի նորագույն մի տեսակի հետ, որը երբեմն շատ ավելի թաքնված է, քողարկված բարի նկատառումներով ու հաճախ անտեսանելի
:

Հիմա կհարցնեք՝ ինչո՞ւ 15 տարեկան պատանին պետք է իմանա, մի բան էլ գրի այս երևույթի մասին: «Մեծերի հասկանալու բան է թրաֆիքինգը»,- շատերից կլսեք: Ո՛չ, մենք այլ կարծիք ունենք: Երևույթը ճանաչել, հասկանալ դրա խորքային արմատները, էլ ավելի խճճված պատճառները անհրաժեշտ է յուրաքանչյուրիս՝ մեծ, թե փոքր: Իրականություն է. 21-րդ դարի ամենամեծ սպառնալիքը՝ թրաֆիքինգը, կանգ չի առնում ոչ մի տարիքի առաջ, ավելին՝ հեշտությամբ անցնում է սահմանները՝ սպառնալով անգամ քաղաքակիրթ հասարակություններին, ու կարմիր շրջանակի մեջ առնված թակարդում հայտնվում են անգամ նրանք, ովքեր առաջին հայացքից հեռու են երևույթի խոցելի թիրախից:

Սպիտակ ստրկությունը տարածվում է աննկարագրելի արագությամբ, ու մարդկային ճակատագրերի վրայով դրա արագընթաց քայլարշավը կասեցնելու համար բոլորս անելիք ունենք: Այն նվազագույնը, որ մեզնից յուրաքանչյուրը կարող է՝ իրազեկ լինելն ու երևույթի մասին տեղեկատվությունը տարածելն է:

Այս գրքույկը մեր սկսած քարոզարշավի նախաձեռնություններից ավելի ստեղծագործականն է. պատանիներն ու երիտասարդներն իրենց ստեղծագործական աշխատանքներով խոսում են երևույթի մասին, կիսվում իրենց ընկալումներով ու պատկերացումներով, հորդորում իրենց հասակակիցներին և բոլորին՝ լինել շրջահայաց և համախմբվել անվտանգ, պաշտպանված մոլորակ ունենալու մեծ ցանկությամբ:

Յուրաքանչյուրիս ջանքը, անկախ տարիքից ու զբաղեցրած դիրքից, կարող է տալ սպասված արդյունքը, և հարկավոր չի լինի սպասել շատ երկար, որ լույս տեսնեն նոր գրքեր՝ վառ գույներով և այսօրվա չարիքները հաղթահարող հերոսների մասին պատմություններով:



Maria Matinyan, 14, National Center of Aesthetics
Մարիա Մատինյան, 14տ., Գեղագիտության ազգային դպրոց

Ի՞նչ իմանար...

Քնելուց առաջ Դավիթը, ինչպես ամեն օր, նայեց մահճակալի կողքին դրված նկարին: Այնտեղ ինքն էր՝ մոր հետ. մայրը գրկել էր փոքրիկ տղային, բայց նայում էր ոչ թե լուսանկարչական ապարատին, այլ իրեն՝ երջանիկ ժպիտով: Եվ այնքա՜ն սեր կար այդ հայացքի մեջ… Իսկ հիմա Դավիթն անկեղծորեն հավատում էր, որ մայրն իրեն չի սիրում: Հոր մահից մեկ տարի էլ չանցավ, որ ընտանիքի վիճակը վատացավ, մայրն էլ մեկնեց արտերկիր՝ աշխատելու: Նա խոստացավ, որ շուտով կվերադառնա, և ամեն ինչ լավ կլինի: Դավիթը մնաց տատի ու պապի հետ: Նա ամեն օր սպասում էր մոր զանգին: Սկզբում նա հաճախ էր զանգում, հետո գնալով զանգերը նվազեցին: Որ ինչ-որ բան էր պատահել, Դավիթն զգում էր տատի ու պապի շփոթված հայացքներից: Եվ մի օր պատահաբար լսեց, թե ինչպես հարևանը ինչ-որ մեկին պատմում էր իր մոր մասին, նրան «անառակ» անվանում: Աշխարհը կորցրեց իր գույները: Տղան մնաց մեն-մենակ դաժան ու չար իրականության հետ… Այդ օրը նա քնելուց առաջ վերցրեց նկարը և նետեց դարակը: Նա այլևս չէր հավատում, որ կտեսնի մոր՝ սիրով ու գգվանքով լի հայացքը:

Հետո օրերը՝ գորշ ու անհետաքրքիր, հաջորդեցին մեկը մյուսին: Հոգեկան այդ ծանր վիճակում նա ստիպված էր ամեն օր կատարել նույնը՝ գնալ դպրոց, վերադառնալ տուն, ճաշել, դաս սովորել, քնել, արթնանալ… Իսկ մոր վերադարձը գուցե այլևս չօգներ: Եթե նա այդպիսին է, ուրեմն իրեն չի սիրում…, թող մնա արտերկրում…

Եթե միայն իմանար, թե ինչեր է հաղթահարում մայրը…, թե ինչ տառապանքների միջով է անցնում… Եթե իմանար, թե ով է կյանք ու հույս տալիս նրան ամեն անգամ, երբ հուսահատությունից ուզում է ինքնասպան լինել… Ի՞նչ իմանար Դավիթը, որ, ի տարբերություն իրեն, մայրը չի կորցրել հավատն ու վստահ է, որ հրաշք կկատարվի, կվերադառնա իր տղայի մոտ…

Ալլա Իգիթյան
Արաբկիրի հայորդաց տուն
Լրագրողների դասարան

Դադարեցնե՛նք թրաֆիֆինգը

Մենք բոլորս ապրում ենք անգամ առանց մտածելու, թե ինչ է կատարվում մեր շուրջը: Երբ մենք գնում ենք դպրոց, երբ նստում ենք փափուկ բազկաթոռին և դիտում մեր սիրած հաղորդաշարը կամ երբ վայելում ենք պաղպաղակը սրճարաններից մեկում, բազում բաներ են կատարվում հենց այդ պահին մեր շուրջը, որոնց մասին մենք անգամ պատկերացում չունենք: Հիմա, երբ այս սենյակում հարցեր ենք քննարկում թրաֆիքինգի մասին, միգուցե հենց այս պահին որևէ մեկը որևէ տեղում ենթարկվում է թրաֆիքինգի: Իսկ երբևէ մտածե՞լ եք, որ հենց դուք կարող եք լինել հաջորդը: Ո՞չ: Պարոնա՛յք, եթե մեզ հետաքրքրում է մեր ներկան և եթե մենք ուզում ենք ապահովել ավելի բարե-

կեցիկ ապագա մեր սերունդներին, մենք պետք է սկսենք գործել հենց հիմա:
Եթե այսօր այստեղ ենք և խոսելու ենք թրաֆիքինգի մասին, թույլ տվեք մեկ անգամ ևս հիշեցնեմ, թե ինչ է թրաֆիքինգը: Թրաֆիքինգը մարդկանց անօրինական վաճառքն է սեռական ոտնձգության կամ ստրկության նպատակներով, կարճ ասած՝ ժամանակակից ստրկավաճառություն: Մենք գիտենք, որ ստրկատիրական հասարակարգն առաջացել է բազում հարյուրամյակներ առաջ, բայց այն դեռ շարունակում է աճել ու աճել: Սկսած 2000 թվականից՝ 10 տարվա ընթացքում թրաֆիքինգը երրորդ հորիզոնականից բարձրացել է առաջին՝ շրջանցելով նույնիսկ թմրավաճառությանը: Որպես դպրոցականներ՝ մենք ոչինչ չենք կարող անել թրաֆիքինգի դեմ, բայց, ինչպես ես եմ կարծում, մեր դերն այս հիմնախնդրում այլ մարդկանց համար տեղեկության աղբյուր լինելն է:
Ապրելով 21-րդ դարում՝ մենք բոլորս էլ գիտենք, որ այս հազարամյակում տեղեկացված լինելը նշանակում է լինել զինված, քանի որ տեղեկությունը նաև զենք է: Մենք այդ զենքերը կարող ենք օգտագործել բազում չարիքների դեմ, նրանցից շատերը՝ նաև թրաֆիքինգի: Բայց, ցավոք, բոլորս էլ գիտենք, որ այդ զենքերին տիրապետում են ոչ բոլորը: Դրա համար էլ մեր նպատակն այսօր մեր զենքերը ուրիշներին փոխանցելն է՝ ծերերից մինչև երիտասարդներ, հարուստներից մինչև աղքատներ և միախմբվել մեկ՝ թրաֆիքինգը կասեցնելու նպատակի շուրջ:

Արամ Ավետիսյան
Ա. Շահինյանի անվ.
ֆիզիկամաթեմատիկական դպրոց
Բանավեճի ակումբ

Պատասխան են տալիս երեխաները

Անահիտը տասնյոթ տարեկան է, նա համր է: Նրա մայրը «հայտնի» կավատ է:
Աղջիկն ամեն օր լսում էր մոր հանդիմանանքը, թե ինքը ձրիակեր է, ավելին՝ լեզու էլ չունի, որ գոնե մի աշխատանք գտնի, մոր առաջարկած աշխատանքին էլ համաձայն չէ: Մի օր, երբ աղջիկը վերջացրել էր իրենց մեկսենյականոց բնակարանի մաքրությունն ու զբաղված էր ասեղնագործությամբ, նրանց տուն, առանց դուռը թակելու, մտավ կոստյումով, հաստլիկ մի մարդ, նրա հետևից էլ՝ աղջկա մայրը: Մայրն ակնարկեց, թե պարոնն աղջկա օգնության կարիքն ունի ու տնից դուրս եկավ: Պարոնը լուռ մոտեցավ աղջկան, շոյեց մազերը..., ուշադիր զննեց աղջկա ասեղնագործությունն ու խռպոտ ձայնով ասաց, որ աղջիկը նման է իր իսկ ասեղնագործած վարդին... իբրև թե պատահմամբ ձեռքին էր դիպչում՝ ցանկանալով համբուրել: Աղջկան այդ ամենը դուր չէր գալիս..., նա աղաչական հայացքն ուղղել էր դռանը՝ հուսալով մոր օգնությանը: Այդ պահին լսվեց դռան փականի ձայնը. մայրը դրսից կողպեց դուռը և, ի վերջո, հաստլիկի շոյանքներն ավելի «համարձակ» դարձան... ու... ուժի գործադրմամբ կատարվեց անխուսափելին...
Մի քանի ժամ անց նորից լսվեց փականի ձայնը, դուռը բացվեց, ներս մտավ մայրը: Հաստլիկը, ուսին գցելով կոստյումը, իր զզվելի մռութը մոր ականջին մոտեցնելով՝ ինչ-որ բան շշնջաց և անհետացավ:
Անահիտն աննկարագրելի վիճակում էր, իսկ մայրը դառը ժպիտով ասաց.
-Լաց մի՛ լինիր, ամեն ինչ այնքան էլ վատ չէ:
Աղջիկը կարմրած աչքերը սրբեց, բարձր գոռաց և ուժգին ապտակեց մորը:
Կարծես այդ գոռոցը տասնյոթ տարվա լռության, տառապանքների և վերջին ճակատագրական հարվածի միակ ճիչ-բողոքն էր:
Մայրը, անակնկալի եկած, նայում էր աղջկան՝ սառած ժպիտը դեմքին:
Խաթարվել էր երեխայի հոգեկան անդորրը:
Հենց այդ ժամանակ ներս մտավ թխադեմ մի երիտասարդ ու սկսեց գոռգոռալ մոր վրա, թե ուշացնում է, իսկ ինքը շտապում է:
Աղջիկը գլխի ընկավ, որ սա էլ հաստլիկի նման մեկն է ու կատաղած սկսեց ջարդուփշուր անել տան իրերը: Մայրը մոտեցավ, ոտքով հարվածեց աղջկան ու հավելեց.
- Մեզ հիմա փող շա՛տ է պետք:
Աղջիկը մոր հանդեպ զզվանք էր զգում, կարծես մի քանի ժամվա ընթացքում նրանք օտարացել, թշնամացել էին: Մոր աչքերը, որ միշտ Անահիտին ամենագեղեցիկն էին թվացել, դարձել էին չարագույժ: Անահիտը մտածում էր. «Եթե այս կինն իր աղջկան կարող է վաճառել, ապա քանի՛-քանի՛ ինձ նմաններն են խորտակվել չարագործի ձեռքով, մի՞թե ես այսքան տարի այդ «կործանված կյանքերի» կեղտոտ փողով եմ ապրել»:
Անահիտը ճանկեց գետնին ընկած դանակը...
Երիտասարդն այլայլված դուրս թռավ տնից...
Մի քանի ժամ անց ներս խուժեցին ոստիկանները և... հատակին գտան Անահիտի մոր անշնչացած մարմինը, իսկ անկյունում՝ կուչ եկած «խելագար» աղջկան:
Տարան երկուսին էլ. անպաշտպան աղջկան հանցագործության մեղադրանքով բանտախուց ուղարկեցին, իսկ մորը թաղեցին առանց դագաղի, առանց պատանքի...

Մի առավոտ բանտապահը բացեց մութ խցի դուռը, ու երկաթյա դռան ճռնչոցի հետ լսվեց Անահիտի անբնական գոռոցը: Սա արդեն երկրորդ ճիչն էր, խորտակված, խաթարված կյանքի բողոքը, որից հետո աղջիկը հինավուրց ծառի նման տապալվեց քարե սալիկներին… Նա էլ մեռավ՝ իր սրտում տանելով աշխարհի և մոր ոճիրների ցավը…

Պատմությունը հիմնված է իրական դեպքի վրա և գրվել է փաստերի հետազոտման արդյունքում:

Արթուր Հովհաննեսյան
«Արևածաղիկ»

Սպիտակ ստրկությունը գրոհում

Եթե այսօր Երևանի փողոցներում պարզ սոցիոլոգիական հարցում անցկացվի, թե Դուբայում կամ Թուրքիայում կանանց և աղջիկների աշխատանքային ուժի պահանջարկն ինչ բնույթի աշխատանք է ենթադրում, մեծամասնությունը կհիշատակի հինավուրց մասնագիտության պահանջարկը: Ինչ խոսք, այդ երկրներ մեկնող հայ կանանց շրջանում հիմա էլ կան և կլինեն այնպիսիք, ովքեր դեռ հավատ կընծայեն խոստումներին, բայց, օտար երկրում հայտնվելով, կհամոզվեն, որ իրենց խոստացված «բարձր վարձատրվող» աշխատանքն ընդամենը թրաֆիքինգ է կամ, ինչպես նշում են, սպիտակ ստրկություն:
Ծանր տարիներին ոմանք, երեխայաբար հավատալով արտերկրից խոստացվող «ոսկե սարերին», հայտնվել են օտար երկրում, օտարի ձեռքում և բռնի ցանկությունների գրկում: Նման պատկերը սարսափելի նմանություն ունի եվրոպական երկրներում մեծ պահանջարկ վայելող թրիլերների բովանդակության հետ:
Թրաֆիքինգի դեպքում մինչ մարդու «ֆիզիկականի ծախվածությունը»՝ ծախվում է նրա հոգին, այնուհետև՝ մարմինը: Թե ինչ հոգեկան ապրումներ է ունենում թրաֆիքինգի ենթարկվողը, հայտնի է միայն հին ժամանակներում ապրող ստրուկներին, որոնց նկատմամբ կիրառվող բռնության տարրերն առկա են նաև այս գեհենային երևույթի մեջ:
Հայտնագործություն արած չենք լինի, եթե նշենք, որ գոյություն ունի արդիական բնույթ կրող և թրաֆիքինգային ևս մեկ երևույթ, երբ շահագործվողը «օգտագործվում է» հենց սեփական ընտանիքի կամ ծնողի կողմից:
Մայրաքաղաքի փողոցներում այսօր հաճախ կարելի է հանդիպել մուրացիկ երեխաների, ինչպես միայնակ, այնպես էլ՝ ծնողների ուղեկցությամբ: Մեծ թիվ են կազմում, մասնավորապես, մայրերի կամ այդ կարգավիճակով հանդես եկող կանանց հետ մուրացկանությամբ զբաղվող երեխաները, որոնք օգտագործվում են՝ որպես շահույթ ապահովող «ապրանքներ»:
Հարց է ծագում՝ սա էլ արտասահմանը չէ, Հայաստանն է: Պատասխանն էլ հետևյալն է՝ սպիտակ ստրկությունն ամենուր գրոհում է:

Ասյա Մուրադյան
«Փյունիկ»

Թրաֆիքինգը՝ ամենաարագ աճող հանցանքը

Թրաֆիքինգ… դու երբևէ մտածե՞լ ես դրա մասին: Կարծում ես գիտե՞ս՝ ինչ է դա: Ենթադրում եմ՝ ոչ, որովհետև ոչ մի ազատ մարդ չի կարող հասկանալ ազատության հույսի այն ահաբեր ցավը, որը զգում է այն մարդը, ով ազատ չէ:
«Ես չեմ կարող նկարագրել այն ցավը, որ զգացի, երբ տեսա այդ փողի պարկը, որ հայրս ստացավ»,- ասում էր Կազուկո անունով մի աղջիկ, ով ապրում էր Չինաստանում: Նրա հայրը իր նավի համար գործիք գնելու նպատակով վաճառել էր աղջկան: Նա գիտեր, որ հայրն իսկապես կարիք ունի գումարի, բայց չէր էլ կարող պատկերացնել, որ հայրը կարող էր նույնիսկ մտածել նրա մարմինը վաճառելու մասին: Կազուկոն օգտագործվեց և ենթարկվեց թրաֆիքինգի: Ու տարիներ անց նա փրկվեց, բայց արդեն միայնակ մայր էր, ով պայքարում էր իր գոյատևման համար:
Ստրկությունը վերացել է 150 տարի առաջ, ճի՞շտ է: Սակայն, իրականում, այսօր համարյա ամենուր ականատեսն ենք ստրկության: Թրաֆիքինգը՝ ամենամեծ և ամենաարագ աճող հանցանքը, հասել է այնպիսի աննախադեպ աստիճանի, որ այն կարող ենք անվանել ստրկատիրության մի նոր ձև: Թրաֆիքինգը առկա է և՛ զարգացող, և՛ զարգացած երկրներում: Զգուշացե՛ք: Վտանգը շատ մոտ է ձեզ:
Թեև դժվար է, բայց փորձե՛ք պատկերացնել ձեզ՝ թրաֆիքինգի ենթարկված: Ցավո՞ւմ է: Զգո՞ւմ եք վիշտը: Հիմա վերադարձեք իրական աշխարհ: Համոզված եմ՝ հաճելի չէր: Բայց հավատացե՛ք, դա շատ չնչին բան էր՝ ընդամենը երևակայություն: Այժմ պատկերացրեք՝ ինչքա՛ն սարսափելի է, երբ այն իրական է:
Մի հարց կարելի՞ է: Դուք սիրո՞ւմ եք պոպկորն: Անձամբ ես՝ շատ եմ սիրում:
Բայց երբևէ մտածե՞լ եք, որ պոպկորնը, որը դուք ուտում եք, նույն թրաֆիքինգի ենթարկված եգիպտացորենն է: Հարցնում եք՝ ինչո՞ւ, որովհետև եգիպտացորենին ասել էին, որ այդ գործարան մտնելուց հետո նա կդառնա համով ուտելիք, բայց նա չգիտեր, որ իրեն կարող են դարձնել այդքա՛ն չոր կամ առանձնացնել իր հատիկները: Ի՞նչ է ստացվում. որ եգիպտացորենն օգտագործվեց, քանի որ տեղյակ չէր իրեն սպառնացող վտանգի մասին:
Եվ այսպես՝ եղե՛ք ուշադիր, թույլ մի՛ տվեք, որ ինչ-որ մեկը վաճառի ձեր մարմինը կամ առուվաճառքի ենթարկի ձեր հոգին: Եվ վերջապես, այս ամենից հետո ուզում եք նստել այստեղ, անընդհատ խոսել ու ոչ մի քայլ չձեռնարկե՞լ: Համոզված եմ՝ ո՛չ: Եվ ես հավատում եմ, որ մենք միասին կարող ենք անել ավելին:

Ավնիկ Մելիքյան
ՄԱԿ-ի Հայկական ասոցիացիա
Բանավեճի ակումբ

Թրաֆիքինգը՝ մարդկության չարիք

Մարդկանց առևտուր և շահագործում չարիքի գոյության մասին առաջին անգամ տեղեկացա, երբ տասներկու-տասներեք տարեկան էի:
Ռադիոկայաններից մեկով լսեցի, թե ինչպես մի սպիտակամորթ, գեղեցիկ կնոջ աշխատանք խոստանալով՝ տարել էին ինչ-որ արաբական երկիր, որտեղ հասկացել էր, որ իր նման տասնյակ կանանց հետ ստիպված էր որոշակի սննդի դիմաց ծիերի փոխարեն լծվելու կառքին և արաբ շեյխերի հաճույքի համար մասնակցելու ձիարշավ-մրցույթի, իսկ շեյխերը զվարճանում և խաղադրույքներ էին կատարում: Այդ կնոջը պատահմամբ հաջողվել էր փախչել. նա իր տեսածի մասին պատմել էր լրագրողներին՝ հույս ունենալով օգնել նաև մյուսներին:
Հիշում եմ, որ այն ժամանակ լսածս պատմությունը, որի մասին պատմել էր հենց ինքը՝ զոհը, ապշեցրեց ինձ, քանի որ մտքովս անգամ չէր անցնում խաղաղ պայմաններում մարդու այդպիսի վերաբերմունք իր նմանի նկատմամբ:
Դպրոցում մեզ սովորեցրել էին, որ ստրկատիրությունը վաղուց վերացել է, սակայն ես այլևս չէի հավատում դրան: Այդ օրվանից իմ մեջ շատ հարցեր առաջացան, ես սկսեցի տեղեկություններ հավաքել թրաֆիքինգ կոչվող երևույթի վերաբերյալ, քանի որ սկսեցի անհանգստանալ և վախենալ իմ և իմ մտերիմների կյանքի համար, մտածում էի, որ շատ տեղեկություններ հավաքելու դեպքում հնարավորություն կունենամ օգնելու մարդկանց. միաժամանակ հույս ունեի, որ իմ երկիրը զերծ է այդ չարիքից, բայց սրտի ցավով շուտով հասկացա, որ հույսերս զուր էին:
Ժամանակակից աշխարհը լի է այդպիսի և առավել սարսափելի իրողություններով. լուրջ անելիքներ կան այն կանխելու կամ նվազեցնելու ուղղությամբ: Իրականությունը ցույց է տալիս, որ չնայած մեր օրերում թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկատվությունը բավականին մեծ է, սակայն դա բավարար չէ, քանի որ աշխարհում դեռևս գոյություն ունի զոհերի և հնարավոր զոհերի շատ մեծ քանակ, քանի որ դեռ մեծ է սեփական կյանքը բարելավելու մարդու մշտական ձգտումն ու անփորձությունը:
Ուսումնասիրելով թրաֆիքինգ երևույթը՝ պարզ է դառնում, որ մարդկանց առևտուրն ու շահագործումը կանխելու լավագույն տարբերակը կլիներ այն, որ բոլոր մարդիկ մնային սեփական երկրում, պաշտպանված լինեին բոլորի իրավունքները, ունենային բավարար վարձատրությամբ աշխատանք, չլինեին մանկատներ և այլն, սակայն, հասկանալի է, որ դա գործնականում հնարավոր չէ: Հետևաբար, խնդրին անհրաժեշտ է տալ հիմնարար, համարժեք և կտրուկ լուծում:
Չնայած թրաֆիքինգի բազմազանությանն ու տարածվածությանը, այնուամենայնիվ հնարավոր է լուրջ հաջողությունների հասնել այն կանխելու գործում: Դրա համար պետք է մշակվի և կյանքի կոչվի ապահովագրական կամավոր կամ պարտադիր ծրագիր կամ օրենք հատկապես արտասահման մեկնող քաղաքացիների համար, քանի որ, գտնվելով արտերկրում, նրանք դառնում են առավել խոցելի և նախընտրելի խավ առևտրի ու շահագործման համար: Անհրաժեշտ է սերտ համագործակցություն ապահովել տարբեր երկրների իրավապահ և այլ կազմակերպությունների միջև:
Կարծում ենք, որ շատ ավելի կարևոր է մտահոգվել մարդկանց ապահովագրությամբ, քան մեքենաների:

Հակոբ Կարապետյան
«Փյունիկ»

Վե՛ր տանք թրաֆիքինգին

Սա «Հրատապ լուրերն» է **CNN**-ից և ոչ **BBC**-ից կամ Հայլուրից… Թերևս, կապ չունի: Այսօր Սոմալիում, Աֆղանստանում, Ֆրանսիայում… երեխա, կին, տղամարդ թրաֆիքինգի զոհ են դառնում: Լռությո՞ւն:
Հուսով եմ, որ կարող ենք մեր օրերի ամենակարևոր խնդրի՝ թրաֆիքինգի լուծումը գտնել: Տեղյա՞կ եք դրա մասին: Ճիշտն ասած, զարմանում եմ Ձեր լռության վրա: Գիտե՞ք ինչու: Յուրաքանչյուր օր, յուրաքանչյուր վայրկյան մենք դառնում ենք այն զարհուրելի իրականության վկաները, որտեղ գոյություն ունի թրաֆիքինգ: Թրաֆիքինգ… մարդկային առևտուր, ժամանակակից ստրկություն: Հիմա չեմ զարմանում, ես բարկացած եմ, քանի որ չեմ պատկերացնում իրականություն, որտեղ մարդը մարդ վաճառի: Չեմ պատկերացնում՝ ինչպես 21-րդ դարում՝ հասարակության զարգացման, առաջընթացի այս դարում, կարող է գոյություն ունենալ թրաֆիքինգը: Ես չեմ ուզում լինել վկան այս խաղի, միջազգային այս հանցագործության մասնակիցը:
Համոզված եմ, որ միայն միասին կարող ենք պայքարել թրաֆիքինգի դեմ: Այսպիսով՝ եկեք սկսե՛նք: Ես ունեմ Ձեր օգնության կարիքը: Եկեք հիմա՛ անենք այդ, եկե՛ք ապրենք առանց ստրկության, որը սպանում է՝ անկախ ազգությունից, սեռից, տարիքից, ռասայական պատկանելությունից:
Եկեք չսպասե՛նք մեր կառավարությունների քայլերին: Մենք կարո՛ղ ենք հաղթել, մենք պետք է ուղղակի միասին լինենք: Եկեք խրախուսե՛նք երիտասարդներին միանալու մեզ:
Սա «Հրատապ լուրերն» է **CNN**-ից և ոչ **BBC**-ից կամ Հայլուրից: Հայ երիտասարդները պայքարում են թրաֆիքինգի դեմ և պահանջում են նո՛ր աշխարհ՝ առանց թրաֆիքինգի:
Կուզենայի արթնանալ մի օր, միացնել հեռուստացույցը և լսել «Հրատապ լուրերն» առանց վախի:
Սա իմ ցանկությունն է, իսկ դո՞ւք ինչ կասեք:

Հասմիկ Կարապետյան
ՄԱԿ-ի Հայկական ասոցիացիա
Բանավեճի ակումբ

Կանխե՛նք մարդավաճառությունը

Մի երիտասարդ բանաստեղծ Վոլտերից կարծիք հարցրեց իր ներբողի մասին, որը կրում էր «Սերունդներին» խորագիրը:
-Ոչինչ,- պատասխանեց Վոլտերը,- միայն կասկածում եմ՝ կհասնի՞ արդյոք իր հասցեատերերին:
Հանճարեղ խոսքեր են:
Բայց ինչո՞ւ ենք մենք այստեղ: Ի՞նչ ենք ուզում: Ո՞րն է մեր նպատակը:
Մենք չենք եկել այստեղ միայն խոսելու, այլ մարդկանց բացատրելու, թե ինչ է

մարդավաճառությունը, ասել՝ ինչու է այդքան կարևոր հասարակության համար, թե ինչու պետք է լինել տեղեկացված: Այդ չարիքի մասին մարդկանց տեղեկացնելն առաջին քայլն է: Մոտ կես դար է, ինչ բոլոր ազգերը փորձում են հասկանալ, թե ինչ է այդ: Չկա որևէ ազգ, որը պաշտպանված լինի մարդավաճառության անեծքից: Մեր օրերում տեղի ունեցող այս ամենը ներում չունի: Անգամ որոշ ազգեր տեղյակ չեն, թե ինչ է այն իրենից ներկայացնում:

Եվ վերջապես, ի՞նչ է մարդավաճառությունը: Ա՛յս է բուն խնդիրը, բայց ոչ միայն խնդիրը: Մարդավաճառությունը քաղաքակիրթ աշխարհում ստրկություն է: Աշխարհում ամենաարագ աճող գլոբալ խնդիրն է, ամենատարածված քրեական արդյունաբերությունը՝ բարձր ռիսկի գործոնով և մեծ շահույթով, որն էլ պատճառ է դառնում լուրջ բռնությունների և մարդկանց իրավունքների ոտնահարման: Վերջապես, այն ամենը, ինչ քայքայում և կործանում է մեր հասարակությունը, անվանում են մարդավաճառություն:

Հաճախ մարդիկ հարցնում են, թե կա՞ արդյոք տարբերություն էմիգրանտների և մարդավաճառության ենթարկված մարդկանց միջև: Անկասկած, կարող ենք պատասխանել՝ այո՛, իհա՛րկե: Սովորաբար, էմիգրանտները ցանկանում են գնալ արտերկիր՝ բարելավելու իրենց կյանքը և գտնելու լավ աշխատանք, բայց, դժբախտաբար, նրանք խոցելի են: Ցավոք, մարդավաճառության զոհերի կարծիքները չեն հարցնում: Նրանք սեփական եսը կորցրած ստրուկներ են: Կհարցնեք՝ ինչո՞ւ: Որովհետև նրանք լծված են աշխատանքի, ստիպված են սեփական օրգանները վաճառել…

Մեր տեսանկյունից մարդավաճառության զոհերի առկայությունը մնում է ամենակարևոր խնդիրներից մեկը, որը մենք պետք է լուծենք: Եվ վերջում, ի՞նչ ենք բոլորս ուզում տեսնել: Այն, ինչ բոլորս ուզում ենք տեսնել, մի գործող համակարգ է, որը մարդավաճառության ենթարկվածներին հնարավորություն է ընձեռում նոր կյանքի, բացահայտում և ջրի երես է հանում մարդավաճառության արատավոր արարքների հետևանքները:

Դժբախտաբար, Հայաստանը դիտվում է որպես մարդավաճառության սկզբնաղբյուր երկիր: Մարդավաճառությունը, որպես քրեական հանցագործություն, Հայաստանում պաշտոնապես ընդունվել է 2003 թվականին: Կառավարությունն իր ամբողջ ուժերը կենտրոնացրել է ընդդեմ մարդավաճառության: Հայաստանը ուժեղացրել և բարելավել է իր գիտական և տեղեկատվական համակարգերը: Տեղեկատվությունը մեր երկրում աճող է. ավելի քան հազար աշակերտ մասնակցում է մարդավաճառությունը կանխելու տարբեր ծրագրերի:

Մարդկության համար անհնարին ոչինչ չկա: Էռնեստ Հեմինգուեյն ասել է. «Նույնիսկ փոքրաթիվ մարդիկ ի զորու են մեծ աղմուկ հանելու»: Մարդ հասնում է մի բանի միմիայն այն ժամանակ, երբ հավատում է իր ուժերին: Եկե՛ք հավատանք ինքներս մեզ և միավորենք մեր ուժերը միևնույն խնդրի համար, քանզի ունենք միևնույն նպատակը: Մենք պե՛տք է պայքարենք և հաղթենք, որովհետև մարդը ստեղծված է միայն հաղթանակի համար: Լռության մեջ հպարտություն չկա: Եկե՛ք բղավենք բարձրաձայն, որ մենք կարո՛ղ ենք պայքարել, մենք կարո՛ղ ենք մաքառել, մենք կարո՛ղ ենք կանխարգելել և վերացնել այդ չարիքը մեր մարդկության համար, այն մարդկության, որը զգում է մեր օգնության կարիքը, այն մարդկության, որը հույս ունի, որ մենք կաջակցենք իրեն:

Կառավարությունն առագաստ է, ժողովուրդը՝ քամի, պետությունը՝ նավ, ժամանակը՝ ծով: Խնդրում եմ, բավական է անիմաստ վատնել և՛ ձեր, և՛ մեր ժամանակը, քանզի ժամանակը ոսկի է, բայց մենք՝ երիտասարդ սերունդը, գիտենք, որ մենք ենք քամին և միայն մենք կարող ենք հեղաշրջել և վերափոխել ամենը, քանզի ամեն ինչ կախված է մեր այժմյան գործողություններից, և, հետևաբար, ամեն ինչ մեր ձեռքերում է:

Մեկ բան ևս. հիշե՛ք, մարդիկ կարող են ապրել առանց ամեն ինչի, բայց ոչ առանց մարդկանց:

Զեմմա Եղիազարյան
Թիվ 78 դպրոց
Բանավեճի ակումբ

Ես եմ՝ մարդկային սիրտը

Աշխարհում ամեն մարդու տրվում է իր սիրտը: Պոեմներում ու վեպերում կհանդիպեք գեղեցկուհիների, որ գրավում ու գողանում են ասպետի սիրտը… Սա այլ բան է…, բայց որ իսկական սիրտ գողանան՝ ոչ ոք չի կարող պատկերացնել: Մեր ժամանակներում ինչե՛ր չեն պատահում…

Իմ տերը գեղջուկ էր՝ հազիվհազ կյանքը քարշ տվող գեղջուկ… Բայց երբեք չէր բողոքում ինձնից, որովհետև նա սիրով ծառայում էր մարդկանց, ես էլ՝ նրան: Բայց մի օր ընտանիքի հոգսը նրան քշեց օտար ափեր… Ա՛յ այստեղ ես սկսեցի տագնապել… Ի՞նչ իմանաս՝ ինչ կպատահի մարդու հետ, որին օր ու գիշեր լծում էին աշխատանքի, կիսաքաղց պահում նկուղում… Իմ տագնապները զուր չէին… Մի օր նրան տարան…

Lida Ghazaryan, 16,
"Hakob Kojoyan" Educational Complex
Լիդա Ղազարյան, 16s.
Հակոբ Կոջոյանի անվան կրթահամալիր

Ավելի հեշտ կլիներ՝ ուղղակի լվանալ ձեռքերս ու կանգ առնել: Կանգ առնել այն մարդու մարմնում, ում չեմ պատկանում: Իմ տիրոջը վիրահատեցին… նա ոչինչ չզգաց, բայց ես ճչում էի, լալիս, երբ ինձ անջատում էին նրանից: Հետո, երբ տերս ազատվեց ինձնից, նրան ծածկեցին ճերմակ սավանով: Իսկ ինձ պատվաստեցին ուրիշ սրտի փոխարեն:

Նոր տերս ճարպոտ միլիոնատեր է… Հիմա ես նրա համար աշխատում եմ անվերջ-անդադար, որովհետև հազիվ եմ հասցնում նրա կուշտ ու կուռ մարմինը սնել արյունով: Երբեմն-երբեմն նրա մեջ փորձում եմ

գութ արթնացնել, սեր, քնքշություն: Անօգուտ է: Նա վաղուց չգիտի, թե ինչ բաներ են դրանք: Ես հուսահատված մի պահ կանգ առա, որովհետև ոչ մեկին՝ մանավանդ մարդկային սովորական սրտին, հաճելի չէ ապրել առանց սիրո… Գիրուկն սկսեց շնչահեղձ լինել, օդ աղերսել: Հետո խոստովանեց, որ մի կլորիկ գումար է ուղարկել գեղջուկի ընտանիքին: Իսկ վերջին պահին նրա աչքերում արցունք տեսա… գուցե զղջումի արցունքնե՞ր էին… խղճացի ու շարունակեցի զարկել… Շարունակեցի, որովհետև իմ մեջ շատ է գութը, սերը… ես չեմ կարող չօգնել անգամ այդպիսի մարդկանց…

Զուլիետա Մարտիրոսյան
Արաբկիրի հայորդաց տուն
Լրագրողների դասարան

Մի՞թե ամեն ինչ լավ կլինի

Ցուրտ է… Շատ ցուրտ է ու մութ… ՀՈԳՈՒՄՍ… Ի՞նչ անեմ, ինչպե՞ս անեմ, մի լուծում, մի ելք չեմ գտնում: Ուր գնում եմ՝ փակ դուռ է: Աստվա՛ծ իմ, մի՞թե քո իսկ հայրենիքում, քո իսկ հայրենիքի քաղաքացին ու լիիրավ անդամը լինելով՝ չես կարող մի ելք գտնել, մի աշխատանք գտնել: Տանը ոչ ոք չի աշխատում, ես եմ միակ աշխատունակը, ավելի ճիշտ՝ աշխատունակ գործազուրկը… Ընտանիքիս կարիքները ես պիտի հոգամ, այլ կերպ չի կարող լինել: Ինչքա՞ն կարելի է պարտքով փող վերցնել: Ոչ մի օգնող չունենք, ուրիշների պես «լավ» բարեկամներ չունենք, որ օգնեն մեզ: Բոլորի հույսը ինձ վրա է: Դժվար է…
Ահա՛, գտա՛: Այս ի՞նչ հայտարարություն է: Ո՞ւր է հեռախոսը, զանգեմ, գուցե մի բան կլինի:
-Բարև ձեզ, ես աշխատանքի համար եմ զանգահարել: Թափուր տեղ ունե՞ք:
-Ո՛չ: Արդեն աշխատողներ ենք ընդունել:
Եվ այսպես, ևս մի հիասթափություն, հուսախաբություն… Փորձում եմ հայտարարություններ փնտրել, կրկին զանգահարում եմ, բայց… Բայց այս «Ո՛չ: Արդեն աշխատողներ ենք ընդունել» արտահայտությունը հնչում է դատավճռի նման՝ անբեկանելի ու չքննարկվող… Թվում է՝ հույս չկա: Լավ, թերթերում նայեմ, գուցե մի բան գտնեմ: Ահա՛, տեսա՛: Բարձր աշխատավարձ, աշխատում են շաբաթը 5 օր՝ ընդամենը 4 ժամով: Ահա՛ հեռախոսահամարը, զանգե՛մ:
- Բարև Ձեզ: Ես ԱՄՆ-ում առաջարկվող աշխատանքի համար եմ զանգահարում:
- Այո՛: Կարո՞ղ եք գալ մեր գրասենյակ:
Աստվա՛ծ իմ, մի՞թե կստացվի ու ամեն ինչ լավ կլինի: Չե՛մ հավատում: Աստվա՛ծ իմ, օգնի՛ր ինձ:
- Ահա՛ փաստաթղթերը: Ամեն ինչ պատրաստ է: Կարող եք հավաքել ճամպ-ռուկները: Երկու շաբաթից մեկնում եք:
Ստացվե՛ց: Վերջապես մի բան կստացվի, ու ամեն ինչ լավ կլինի:
- Մա՛մ, մա՛մ, գիտե՞ս՝ գնում եմ ԱՄՆ՝ աշխատելու: Շատ լավ պայմաններ են: Բարձր աշխատավարձ, ու աշխատաժամերն էլ քիչ են:

- Բայց, ախր, բալես, ո՞նց կլինի: Ո՞նց պիտի անես մենակ, ախր ոչ մեկին չես ճանաչում, չգիտես:
- Մա՛մ ջան, հանգի՛ստ եղիր, մենակ չեմ, խմբով ենք գնում: Մի՛ անհանգստացիր:
Աստվա՛ծ իմ, ստացվե՛ց, շուտով… շատ քիչ մնաց… մի քանի ժամ, և բոլոր հարցերն ու խնդիրները կլուծեմ:
Ահա՛, այստե՛ղ եմ: ԱՄՆ… Ինչքա՛ն եմ լսել այս երկրի մասին, ինչքա՛ն մարդիկ են եկել այստեղ ու կայացել: Ես էլ կկայանամ, փող կունենամ, կուղարկեմ ընտանիքիս, ու ամեն ինչ լավ կլինի:
- Մա՛մ, մա՛մ ջան, ալո՛, ես արդեն տեղ եմ հասել, մա՛մ, ամեն ինչ կարգին է: Ասացին, որ վաղվանից կսկսենք աշխատել: Ամեն ինչ լավ է, մի՛ անհանգստացիր:
Ահա՛ և մեր ղեկավարը:
- Այստե՛ղ եք քնելու: Վաղն առավոտյան ձեզ կուղարկենք տարբեր տեղեր՝ աշխատելու: Առավոտյան կհանդիպենք:
Առավոտ է, նոր օր և գուցե նաև…. նոր կյանք: Գնում ենք մեր ղեկավարի մոտ:
- Նստե՛ք: Հիմա փաստաթղթերը կլրացնենք: Բերե՛ք ձեր անձնագրերը:
- Իսկ անձնագրերը ձեզ մո՞տ են մնալու:
- Այո՛: Մեկ էլ տեսար՝ կորցրիք, հետո ինչպե՞ս պիտի վերադառնաք: Դրա համար էլ ձեր անձնագրերն ինձ մոտ կմնան:
Լավ… Միգուցե այդպես ավելի լավ է: Մյուս կողմից էլ՝ ի՞նչ պիտի լինի: Մեկ է՝ վերադարձնելու է: Ոչի՛նչ, կարևորը գումար վաստակեմ ու ուղարկեմ մերոնց, որ պարտքերը փակեն, ու վերջապես դուրս գանք այս ծանր դրությունից:
Օրվա վերջ է… Շատ հոգնած եմ… Շատ ծանր աշխատանք է: Արդեն 12 ժամ է՝ ոտքի վրա եմ: Այնինչ ասվել էր՝ օրը 4 ժամ է լինելու աշխատանքը: Շատ հոգնած եմ… Բայց ասացին, որ օրվա վերջում աշխատավարձը կտան: Բայց չտվեցին… Տեսնես վաղը գոնե կտա՞ն:
- Ներողություն, իսկ մեր աշխատավարձը ե՞րբ են տալու:
- Աշխատավարձն ամսվա վերջում կստանաք:
- Բայց ասել էիք, որ օրավարձ է և ամեն օրվա վերջում կտաք մեր գումարը:
- Հիմա փոխվել են պայմանները: Ամսվա վերջում…
Լավ, սպասեմ…
Ամսվա վերջ է… Կրկին մի պատճառաբանություն, և ոչ մի աշխատավարձ… Եվ այսպես՝ վեց ամիս: Նույնիսկ թույլ չեն տալիս տուն զանգահարել: Մայրս էլ հիմա անհանգստանում է:
Աստվա՛ծ իմ … Ինչքա՞ն պիտի այսպես շարունակվի:
Անցավ ևս երեք ամիս… Ավելի վատ է, քան առաջ… Փաստաթուղթ չունեմ, փող չունեմ, ոչինչ չունեմ… Ուզում եմ փախչել, բայց չեմ կարող… Ուզում եմ գնալ, բայց չեմ կարող, փաստաթուղթ չունեմ:
Աստվա՛ծ իմ, ինչքան դեռ պիտի այսպես շարունակվի… Մի՞թե ամեն ինչ լավ կլինի…

Լիա Սայադյան
«Արևածաղիկ»

Թրաֆիքինգ՝ դեպի մահ տանող ամենակարճ ուղի

Վախ, մտահոգություն, կեղծիք, խոստումներ, կործանում, սուտ… բառերի մի շարք, որը որոշակի դասակարգումից հետո վերածվում է մի երևույթի, որը թրաֆիքինգ է կոչվում: Թրաֆիքինգն անօրինական վաճառքն է, և ցավալին այն է, որ վաճառքի «առարկան» հենց ինքը մարդն է:

Ո՞րն է մարդու գինը, որքա՞ն է նրա արժեքը: Արդյոք կա՞ գնապիտակի այնպիսի տեսակ, որը հնարավոր է կպցնել մարդու ճակատին՝ նրա խայտառակ «գինը» բոլորին ցուցադրելու համար: Նման գնապիտակ չկա, սակայն կան մարդիկ, որոնք զբաղվում են նման պիտակների գաղտնի արտադրմամբ: Այդպիսի մարդիկ զուրկ են մարդկային հատկանիշներից ու մտածելու ունակությունից: Նրանք մարդկանց առաջարկում են խոստումնալից աշխատանքներ, մեծ գումարներ աշխատելու տարբերակներ, ուսանողներին՝ արտասահմանում սովորելու հիանալի հնարավորություն, երեխաներին՝ կոնֆետներ կամ խաղալիքներ, ու տանում դեպի մահ:

Սովորաբար «վաճառականները» լավ են աշխատում, ու «զոհերից» քչերն են հասկանում նրանց նպատակն ու համաձայնում են. նրանց ապագան միանգամից մթագնում է: Մեկնում են իրենց երկրից՝ հայտնվելով այնտեղ, որտեղից կանչել են: Հիմնականում նրանցից խաբեությամբ վերցնում են անձնագրերն ու ստիպում կատարել աշխատանքներ, որոնք անպատվաբեր են, դաժան ու ծանր հետք են թողնում: Աշխատանքը կատարելուց հետո մեծամասնությանը սպանում են, իսկ փախչել կամ փրկվել հաջողվում է քչերին: Օրեցօր մեծանում է թրաֆիքինգի ենթարկվող մարդկանց թիվը, իսկ դրա հիմնական պատճառը տեղեկատվության պակասն է: Այս դեպքում չտեղեկացված լինելը դեպի մահ տանող ամենակարճ ուղին է:

Թրաֆիքինգի չենթարկվելու համար հարկավոր է շատ լավ հետաքրքրվել, թե ով է առաջարկ կատարողը. արդյոք կա՞ նման աշխատատեղ, որտե՞ղ: Պետք է միշտ ունենալ անձնագրի կրկնօրինակը, մինչ գնալը ազգականների հետ, բացի հեռախոսային կապից, այլ կապ հաստատել, որովհետև առաջարկողի տված համարը կամ հասցեն կեղծ է լինում: Ամեն ինչ կախված է տեղեկացված լինելուց: Պետք չէ գայթակղվել անհիմն խոստումներով, պետք է ավելի իրատես լինել ու որոշում կայացնելուց առաջ երկար մտածել:

Թրաֆիքինգի կարող են ենթարկվել բոլորը՝ անկախ տարիքից ու սեռից, սակայն դրա զոհը դառնում են հիմնականում երիտասարդ ու աշխատունակ մարդիկ: Երեխաները ստիպված են լինում մուրացկանությամբ զբաղվել, կանայք՝ մարմնավաճառությամբ, տղամարդիկ՝ տաժանակիր աշխատանքով: Սակայն ամենադաժանը մարդկանց օրգանների առուվաճառքն է՝ սպանում են երեխաներին ու երիտասարդներին նրանց ներքին օրգանները վաճառելու նպատակով:

Թրաֆիքինգը կարելի է պատկերացնել երկու գույնով՝ կարմիր՝ ֆիզիկական մահը, սև՝ հոգեբանական մահը. պետք չէ ծիածանի գույները փոխել այս երկու գույնով:

Հազարավոր մարդիկ են խաբվում ու կործանվում՝ ելքը չգտնելու պատճառով, սակայն, մինչ ելքը գտնելը, հարկ է ճիշտ մուտքով մտնել:

Մանե Գրիգորյան
«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

Ես սխալվում էի...

Սուրենը՝ հարևանս, առավոտյան, ինչպես միշտ, շուտ դուրս եկավ տնից: Չնայած դեռ տասնութ տարեկան էր, բայց ուսուցչություն էր անում գյուղի միջնակարգ դպրոցում ու միաժամանակ սովորում հարևան գյուղաքաղաքի ամենահայտնի ու միակ համալսարանում: Իսկ ես այդ ժամին միշտ դուրս եմ գալիս բակ ու նստում՝ նայելով փողոցով անցնող երիտասարդներին:

Փոստատարին էլ տեսա, երբ նամակ էր դնում Սուրենի փոստարկղում: Հետո մոտեցավ ինձ, հանձնեց իմ նամակն ու շշուկով խոսեց. «Աշխատավարձ արդեն երեք ամիս է՝ չեմ ստացել… արդեն մի քանի անգամ փորձել եմ հեռանալ գյուղից, բայց տնօրենը չի թողնում… ստիպում է, որ աշխատեմ ու սպառնում է, որ կառևանգի երեխաներիս, եթե չկատարեմ աշխատանքս…»,- արցունքն աչքերին ու դողացող ձայնով ասում էր նա: Միայն մեկ րոպե անց խնդրեց, որ ոչ ոքի չասեմ ու արագ հեռացավ:

Սուրենին էլ տեսա միայն հաջորդ առավոտյան: Չնայած շտապում էր աշխատանքի՝ կանգնեց ու պատմեց, թե ինչ էր գրված երեկվա նամակում. «Ուսումնական հրավեր եմ ստացել արտասահմանի լավագույն համալսարաններից մեկից: Ուզում եմ գնալ: Պատկերացնո՞ւմ ես՝ նրանք մեր շրջանից միայն ինձ են ընտրել»,- արագ պատմեց տղան, չլսեց իմ պատասխանն ու շտապեց դպրոց:

Նրան այլևս չտեսա, չէր զանգում, ոչ էլ հաղորդագրություն էր ուղարկում: Բարեկամներ էլ չուներ, որ կարողանայի գոնե իմանալ, թե ինչպես է:

Նրան տեսա միայն հեռանալուց հինգ ամիս անց փողոցի անկյունում: Չբարևեց, գլուխը կախ անցավ: Հաջորդ առավոտյան եկավ, նստեց աստիճանների դիմաց ու սկսեց դժվարությամբ պատմել. «Ինձ խաբեցին ու ինձ նման մի քանի երիտասարդների նույնպես: Սոված էինք մնում օրերով, հաց տալիս էին միայն շաբաթ օրերին՝ մի կտոր, այն էլ՝ սև… Պահում էին նկուղում, ուր ոչինչ չկար, միայն մկներ էին ու թռչունների լքված բներ: Ստիպում էին, որ թալանեինք մարդկանց ու մուրացկանություն անեինք: Վախենում էինք փախչել, իսկում էին մեզ… Այդ ամենից հետո չեմ կարողանում նայել մարդկանց աչքերին, թվում է, թե ինձ կճանաչեն: Արդեն որոշել եմ՝ էլ երբեք չեմ հեռանա մեր գյուղից, այստեղ ես ապահով եմ: Ես սխալվում էի»:

Մուշեղ Հովսեփյան
«Արևածաղիկ»

Tigran Manukyan, 14,
"Mkhitar Sebastatsi"
Educational Complex

Տիգրան Մանուկյան, 14տ.,
«Մխիթար Սեբաստացի»
կրթահամալիր

Օգնություն

(պատմվածք)

Կախվելուց առաջ նա նամակ էր գրել.
«Երանի ես Հայաստանում չլինեի: Ինչ-որ հիմարներ որոշեցին արգելել մահապատիժը: Մտածեցին, որ այդպես մարդասեր են ավելի, հիշեցին կյանքի իրավունքի մասին, բայց ես, իմ նմանները, երբևէ հիշե՞լ ենք: Գայլի ընդվզման նման է, բայց, բոլորի նման, ես նույնպես մտածում եմ կաշվիս մասին: Հիմա ես մենակ եմ ավելի, քան եղել եմ միշտ: Հասկացա, որ մեզնից յուրաքանչյուրն արժանանում է այն միակ կնոջը, որին ուշ, թե շուտ հանդիպում է կյանքում: Բայց մարդն ագահ է, նրա համար առաջնայինը եսի խնդիրն է, փողի ու հարստության հոտը: Երբ նայում էի, թե ինչպես է մայրս փողոցներն ավլելով մաշվում, թե ինչպես է ամեն օր ձեռքի կոշտուկներն աղաջրով մշակում, իմ մանկական աշխարհում հոգևոր զգացմունքներ էին փշրվում, ու ատելություն կար, զզվանք, նախանձ:
Ալիկի հետ ծանոթացրեց Կարենը, դեռ ականջիս էլ շշնջաց. «Ապեր, միլիոնատեր են»: Հա՛, Ալիկը միլիոնատեր էր, բայց մեր ընկերությունը կառուցվեց փոխադարձ հարգանքի, ոչ թե փողերի ակնկալիքով, չնայած շատ անգամներ որոշել եմ թալանել նրան: Դրա մասին նա երբեք էլ չի իմացել, դրա համար էլ ինձ լավ աշխատանք էր տվել մոսկովյան իր հյուրանոցում: Ես հարգում էի նրա ձեռներեցությունը, աշխուժությունը, նման ստեղծող մարդ կյանքումս չէի տեսել… Նա անգամ աղբից կարողանում էր փող սարքել: Հին կերակուրներով աղբը վաճառում էր թափառաշրջիկների կամ շնաբուծարանների վրա: Բացի այդ՝ կարողանում էր լեզու գտնել բոլորի հետ. նա բոլորի ընկերն էր: Ոստիկաններին, հարկայինի տեսուչներին, տարբեր մարդկանց նա դիմավորում ու ճանապարհում էր այնպես, որ նրանք համոզված էին, որ Ալիկն աշխարհի ամենալավ մարդն է, ինչ-որ տեղ նաև իրենց ընկերը: Ու դա Մոսկվայում, ու հայը: Բայց ժամանակի ընթացքում հասկացա, որ բարձրակարգ հաճախորդների անընդհատ հոսքը նրա հյուրանոց պայմանավորված էր երիտասարդ, տարբեր ազգության, գեղեցիկ ու կրակոտ աղջիկներով, այսինքն, իրականում դա հյուրանոց չէր, այլ կիսագաղտնի հասարակաց տուն: Ու ինձ միշտ հետաքրքիր էր, թե ինչպես է նա կարողանում այդ գործի մեջ ներգրավել կանացի այդ էլիտային: Այսինքն՝ խոստումնալից այդ գեղեցկուհիներին ի՞նչն էր ստիպում զբաղվել մարմնավաճառությամբ: Մի՞թե գեղեցկությունն էլ գին ունի, և հնարավոր էր այդքան վճարել: Մի օր չդիմացա ու հերթական բիլիարդի ժամանակ հարցրի: Նա սկսեց ծիծաղել, թփթփացրեց ուսիս, լոջացավ ու ասաց. «Տղերքն են բերում, եթե կկարողանաս, դու էլ բեր: Մինչև քսան հազար կտամ մի էգի համար: Հա՛, բայց նայի՝ փողոցայիններ չլինեն, տենց սաղ էլ կարան»: Ու շարունակեց հռհռալ: Ես հարցրի, թե ինչպես անծանոթ աղջկան ես նման բան առաջարկեմ, իսկ նա պատասխանեց. «Իսկ ո՞վ է ասում, որ իմանան, թե ինչի համար են գալիս»: Ես ավելի ուշ հասկացա, թե ինչ ի նկատի ուներ, բայց ամեն դեպքում սկսեցի «որսս»: Անին իմ հինգերորդ զոհն էր: Մինչ այդ տարածներիս համար Ալիկը նեղվել էր, մի տասը հազար էր տվել ու կես կատակ, կես լուրջ բարկացել. «Էդ պառավ ուռոդներին որտեղի՞ց ես գտնում»: Երբ եկա Երևան, որ օգնեմ մորս տեղափոխվել նոր գնածս բնակարան, ծանոթացա Անիի հետ: Նոր էր ավարտել ինստիտուտը և հիմա անշարժ գույքի գործակալ էր: Լուսավոր աղջիկ էր, կրակոտ, կյանքով լեցուն: Հենց սկզբից որոշեցի, որ նա է լինելու իմ ջեք-փոթը ու սկսեցի սիրահետել նրան: Աշխատանքը փոխելու մտքին կտրականապես դեմ էր, որովհետև սիրում էր իր գործը, սակայն բոլոր աղջիկներն ունեն նույն թույլ կետը. դա ամուսնությունն է: Ինձնից հինգ տարով փոքր էր, ու դա հեշտացնում էր ծրագրիս արագ իրագործումը: Շուտ սիրահարվեց, սկսեցինք ամեն օր հանդիպել, զանգեցի Ալիկին, բացատրեցի, թե ինչու կուշանամ և սկսեցի աշխատել միայն Անիի ուղղությամբ: Ավելի շուտ՝ մեր «հաջողակ և երջանիկ» ամուսնության: Ծանոթացա նրա մոր հետ, հայրը զոհվել էր պատերազմում: Հիմա հիշում եմ, թե ինչպիսի բարի ու օրհնող հայացքով էր ինձ նայում այդ կինը: Իսկական ուսուցչուհու, մանկավարժի հավատավոր աչքերով: «Գիտես՝ ես երկու ամիս առաջ բախտագուշակի մոտ էի գնացել, նա ասաց, որ շուտով ես գտնելու եմ իմ երջանկությունը, որ ինձ մոտ ամեն ինչ լավ է լինելու, և հայտնվեցիր դու»,- մի անգամ ասաց Անին, երբ փաթաթված կանգնած էինք կամրջի վրա: Հետո ինձ նվիրված բանաստեղծություն էր գրել և դրել նվերիս տուփի մեջ. «Քեզ համար տաք բաճկոն եմ առել, որ չմրսես Մոսկվայում, նույնից էլ ինձ, ուղղակի կարմիր…»: Դա հագիս այս մոխրագույն բաճկոնն է, որից մինչև հիմա նրա հոտն է գալիս… Ինքնաթիռում նա ամուր սեղմվել էր ինձ ու քնել: Ես նայում էի, թե ինչքան պաշտպանված ու հանգիստ է զգում իրեն: Այդ ժամանակ ոչինչ չէի զգում, այդ ժամանակ հոգիս մեռած էր: Ալիկը տեսավ, կանչեց, ժպտալով ասաց. «Տես, որ ուզում ես, կարողանում ես, ապրես, սենց էլ շարունակի»,- ապա երեսուն հազար փող տվեց ու գնաց Անիի մոտ: Իսկ ես նույնիսկ կարգին չէի էլ համբուրվել նրա հետ: Չէի կարողանում: Մի օր ասաց, որ ես համբուրվել չգիտեմ, ոնց որ մեծ տղա չլինեմ, հետո ժպտաց ու ավելացրեց. «Լավ, հասնենք Մոսկվա, ես քեզ կսովորեցնեմ»: Ես լսում էի, թե ինչպես է նա ինձ օգնության կանչում, լսում էի, թե ինչպես է իմ անունը գոռում: Ես նստել էի պատի տակ՝ գետնին, ձեռքիս փողերի կապոցներն էին, իսկ ականջներումս՝ Անիի ձայնը. «Սիրում եմ քեզ, գժո՛ւկ»: Ամբողջ գիշեր երազումս մայրս էր՝ իր հանդիմանող հայացքով, երբ ես դպրոցական տարիքում խաղալիքների խանութից «Tetris» էի գողացել: Նա այնքան մեծ էր. կանգնել էր իր ավելը ձեռքին ու լուռ նայում էր ինձ: Ես ուզում էի խոսել, բացատրել, հարցնել կամ ներողություն խնդրել, բայց չէր ստացվում, ինչպես այն ժամանակ, երբ «Tetris»-ը խանութ վերադարձնելուց աշխատողից պետք է ներողություն խնդրեի: Առավոտյան ոստիկանություն գնացի: Իհարկե, Ալիկի մոտ ոչ մի անօրինական բան չգտան, միայն Անիին ու ինձ ուղարկեցին Հայաստան: Նրան՝ տուն, ինձ՝ ոստիկանություն: Դատարանի դահլիճը համարյա դատարկ էր, նույնիսկ մայրս չէր եկել: Ես օգնություն խնդրող աչքերով նայում էի բոլորի ապակե հայացքներին ու ավելի ինձ չէի սիրում: Այստեղ ես ամեն օր մտածում էի մեռնելու մասին, բայց չէի կարողանում ինքս ինձ վրա: Արդեն մեկ ամիս է անցել այդ ամեն ինչից, ու ինձ այսօր օգնեց Անիի երկտողը. «Սիրում էի քեզ, գժո՛ւկ, ինչի՞ տենց արեցիր»…»:

Սևակ Գևորգյան
«Շավիղ»

Մարդկային սիրտը

Առավոտից անհանգիստ էի: Ընկերս խոստացել էր գալ մինչև նախաճաշ, բայց ուշանում էր: Ախր նա կյանքում ոչ մի անգամ չէր ուշացել, և ես ահավոր անհանգիստ էի:
Նա անգլիացի էր: Ապրում էր Լոնդոնում, աշխատում The Times ամսագրում: Լավ լրագրող էր: Ամեն շաբաթ ամսագրի առաջին էջում նրա հոդվածն էր տպագրվում: Այս անգամ էլ պիտի գար մեր քաղաք՝ Արևելքի շուկաների մասին հոդված գրելու:
Հիմա չեմ պատմի, թե ինչեր անցան մտքովս, մինչ սպասում էի նրան: Կասեմ միայն, որ սիրտս քիչ էր մնում դուրս թռչեր կրծքավանդակիցս, երբ լսվեց դռան զանգը:
Նա էր:
- Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ այսքան ուշացար: Չես պատկերացնում՝ որքան անհանգիստ էի, մտքովս ինչ ասես՝ չանցավ,- բարևի փոխարեն նրան դիմավորեցի այս խոսքերով:
- Զբոսնում էի,- նույնպես առանց բարևի կարճ պատասխանեց նա:
- Հավանեցի՞ր մեր քաղաքը,- հարցրի ես՝ նրան ներս թողնելով:
- Ամենևի՛ն,- պատասխանեց նա՝ ուսի պայուսակը դնելով հատակին: - Շա՛տ հետամնաց քաղաք է:
- Բայց ինչո՞ւ հետամնաց,- ես այնքան նեղացած էի, որ նույնիսկ մոռացա նրան հյուրասենյակ հրավիրել, և մենք խոսում էինք միջանցքում:
- Գնացել էի ձեր քաղաքի կենտրոնական շուկան: Ու ի՞նչ:
- Ի՞նչ:
- Ձեր քաղաքի բնակիչները «Վարսավիրանոց» գրելու փոխարեն գրում են՝ «Ես կկտրեմ ձեր վարսերը և կսափրեմ մորուքը»: Իսկ «Հյուրանոց»-ի փոխարեն գրում են՝ «Այստեղ կա փափուկ անկողին և համեղ ուտելիք»:
- Այս երկրի կարգն է այդպես, ի՞նչ ես ուզում:
- Ես էլ ասում եմ՝ հետամնաց երկիր է:
Հանկարծ հասկացա, որ միջանցքում ենք զրուցում, մինչդեռ Ընկերս նոր էր նավից իջել և երևի շատ հոգնած էր:
- Կներես, մոռացա քեզ ներս հրավիրել,- ասացի ես՝ ամոթից կարմրելով:
- Չէ՛, ես հենց հիմա գնում եմ,- կտրուկ ասաց Ընկերս և պայուսակը գցեց ուսին:
- Ո՞ւր ես գնում:
- Կրկին շուկա: Ուզում եմ հենց այսօր սկսել աշխատանքս, որ արդեն երկուշաբթի Լոնդոնում լինեմ,- և առանց ժամանակ կորցնելու՝ դուրս եկավ: Ես նույնիսկ չհասցրի հակաճառել:
Վերադարձավ բավականին ուշ: Հոգված էր, հրաժարվեց ճաշելուց և անընդհատ հետ ու առաջ էր անում սենյակում:
- Ի՞նչ է պատահել:
- Չես հավատա, եթե պատմեմ, թե ինչ տեսա այսօր շուկայում:
Եվ սկսեց իր պատմությունը:
- Գնում էի շուկայով և դիտում այն ծիծաղելի ցուցանակները, որոնց մասին խոսում էինք առավոտյան: Շուկայի նկատելի մասում հանկարծ տեսա մի ցուցանակ (որն անչափ հետաքրքրեց ինձ), որին գրված էր՝ «Ես կյանք եմ վաճառում»: Մտա: Խանութում շատ պահարաններ կային, որոնք խնամքով ծածկել էին սև կտորով: Սեղանի մոտ կանգնած էր խանութի տերը՝ անհրապույր դեմքով մի մարդ: Բարևեցի: Խնդրեցի, որ մի քիչ կյանք վաճառի ինձ: Զարմացած նայեց ինձ, հետո հարցրեց, թե հասկանո՞ւմ եմ արդյոք՝ ինչ է վաճառվում այդտեղ: Ազնվորեն ասացի, որ չեմ հասկանում, գուցե նա ջուր է վաճառում կամ օդ՝ որքան էլ դա ծիծաղելի թվա: Պատասխանելու փոխարեն նա ինձ հարցրեց, թե ունե՞մ արդյոք առողջական որևէ խնդիր: Խոստովանեցի, որ մանկուց սրտի արատ ունեմ: Նա մոտեցավ պահարաններից մեկին, դարակից հանեց մի մեծ փոշոտ անոթ՝ կանաչ հեղուկով լի, և դրեց սեղանին՝ իմ առջև: Սարսափեցի, երբ տեսա՝ ինչ էր մեջը… սիրտ…: Խանութպանը գոհ նայեց «ապրանքին» և ասաց, որ եթե ես գնեմ այն և տանեմ բժշկի մոտ, վիրահատությունից հետո իմ կրծքում առողջ սիրտ կբաբախի: Չհավատացի, որ դա մարդկային սիրտ է: Բայց նա այնպես էր համոզում, երդվում իր բոլոր սրբություններով, որ… հավատացի: Ավելի լավ էր՝ խաբեր:
- Հանգստացի՛ր,- ասացի ես՝ նրան մեկնելով ջրով լի բաժակը:-Նա խաբել է քեզ: Ինչպե՞ս կարող էր մարդկային սիրտ վաճառել, երևի արջի սիրտ է եղել:
- Սկզբում ես էլ այդպես կարծեցի, բայց նա երդվում էր…,- հուզմունքից նրա ձեռքերը դողում էին:-Լսի՛ր,- կարծես ուզում էր մտքերը հավաքել,- վաղը նորից եմ գնալու այնտեղ: Պիտի պարզեմ, թե ինչ է կատարվում ձեր քաղաքում: Եթե չվերադառնամ, իմ փաստաթղթերը կուղարկես մորս, բայց չասես՝ ինձ ինչ է պատահել:
- Գժվե՞լ ես, ի՞նչ է, ես քեզ ոչ մի տեղ չեմ թողնի:
- Մի՛ հիմարացիր, դա իմ աշխատանքն է:
- Ուրեմն, ես կգամ քեզ հետ:
- Դա շատ վտանգավոր է:
- Ինձ համար վտանգավոր է, իսկ քեզ համար՝ ո՞չ,- բարկացած գոչեցի ես, հետո ավելի հանգիստ ավելացրի,- տա՛ Աստված, որ այս ամենն ընդամենը քո հիվանդ երևակայության արդյունքը լինի:
Հաջորդ օրը երկուսով գնացինք շուկա և մտանք այն խանութը, որտեղ «կյանք» էին վաճառում: Խանութպանն այնտեղ չէր, բայց նրա փոխարեն սեղանի մոտ նստած էր մի փոքրիկ աղջիկ և խաղում էր տձև տիկնիկով: Հավանաբար խանութպանի աղջիկն էր:
- Խանութպանն այստեղ չէ,- հուսահատված ասաց Ընկերս:
- Ավելի լավ,- պատասխանեցի ես,- երեխան չի խաբի մեզ:
Մոտեցա աղջկան:
- Բարև, բալիկ ջան:
- Բարև,- ժպտալով պատասխանեց աղջիկը:
- Այս խանութի տերը քո հայրի՞կն է,- ժպտալով հարցրի ես, և, հաստատական պատասխան ստանալով, շարունակեցի,- ասա՛ ինձ, ճի՞շտ է, որ քո հայրիկը մարդկային սրտեր է վաճառում:
- Ո՜չ,- ծիծաղեց աղջիկը,- նա կենդանիների սրտեր է վաճառում, հիմնականում՝ արջերի: Այստեղ,- նա ցույց տվեց նկուղի դուռը,- մենք արջ ունենք: Նա շատ բարձր է գոռում: Ես ուզում եմ իջնել նրա մոտ, բայց հայրիկս թույլ չի տալիս:
Ասաց ու դուրս վազեց, որովհետև փողոցից կանչեցին նրան:
- Տեսնո՞ւմ ես,- հարցրի ընկերոջս:

- Չե՛մ հավատում,- մռայլ ասաց նա և մոտեցավ նկուղի դռանը:
- Ի՞նչ ես ուզում անել:
- Մի՞թե հասկանալի չէ:
- Իսկ եթե տերը վերադառնա՞:
- Դու կարող ես տուն գնալ,- պատասխանեց նա և բացեց նկուղ տանող դուռը:
Չնայած որ շատ վիրավորվեցի նրա այդ խոսքերից, առանց երկմտելու հետևեցի նրան:
Ի՞նչ տեսանք մենք նկուղում… Երանի՜ գազազած արջ լիներ: Բայց Ընկերս չսխալվեց: Նկուղում մարդիկ էին, ավելի ճիշտ այն, ինչ մնացել էր մարդկանցից: Կապկպված հաստ շղթաներով և փակված վանդակներում, կիսամերկ ու գունատ, քաղցած և հիվանդ, նրանք ուժ չունեին անգամ գոռալու, օգնություն խնդրելու: Շատերը դեռ տանջվում էին վիրահատությունից հետո: Ոչ մեկին չէր ցուցաբերվել հետվիրահատական բժշկական օգնություն, ա՜խ, Աստվա՛ծ իմ, ի՞նչ օգնություն: Այնպիսի տպավորություն էր, որ մարդկանց մարմիններից ճանկերով են պոկել սրտերը, թոքերը, աղիները և մնացածը, ինչը կարելի էր պոկել: Ես այնքան էի սարսափել, որ չէի կարողանում խոսել կամ շարժվել: Ընկերս նույնպես, կարծես, արդեն ուրախ չէր, որ եկել է այստեղ:
Հանկարծ մեր գլխավերևում լսվեցին ինչ-որ մեկի ոտնաձայները, ապա՝ խանութպանի ձայնը. «Գնա տո՛ւն»: «Լավ, հայրիկ»,- լսվեց փոքրիկ աղջկա ձայնը և դռան շրխկոցը:
Ես կարծես քնից արթնացա:
- Նա վերադարձավ: Ի՞նչ անենք:
- Ոստիկանություն կկանչենք, հենց հիմա,- սառնասրտորեն պատասխանեց Ընկերս, որ նույնպես ուշքի էր եկել:
- Բայց ինչպե՞ս,- բացականչեցի ես:
- Գիտե՞ս, արդեն քանի՜ տարի է մարդիկ հորինել են մի այնպիսի հրաշք, ինչպիսին հեռախոսն է,- հեգնանքով պատասխանեց նա և հանեց իր բջջայինը:
Ես չեմ հիշում՝ ինչպես նա ոստիկանություն կանչեց, բայց հիշում եմ, որ երկուսս էլ քարացել էինք սարսափից, երբ նկուղ իջավ խանութպանը՝ այն հրեշը, որ մարդկային սրտերը դարձրել էր առուծախի առարկա: Նա չէր սպառնում մեզ, չէր զարմանում կամ բարկանում: Միայն ինչ-որ բան էր անընդհատ կրկնում, այնքան խոնարհ, կարծես ուզում էր արդարանալ…
Զարմանալի է: Ոստիկանությունը շատ շուտ հասավ, և նա նույնիսկ չհասցրեց կարգին արդարանալ: Ես չէի լսում նրան, ավելի ճիշտ լսում էի, բայց չէի հասկանում՝ ինչ էր ասում: Միայն հիշում եմ, որ երբ ոստիկանները նրան ձեռնաշղթաներ հագցրին, նա շուռ եկավ դեպի ինձ և համարյա շշուկով ասաց. «Խնդրում եմ, երեխայիս մի՛ ասեք»: Նրան դուրս տարան: Ոստիկանները դուրս հանեցին նաև այն մարդկանց, ովքեր փակված էին վանդակներում: Շատ շուտով մենք մենակ մնացինք:
- Ի՞նչ էր նա ասում,- շշնջացի ես:
- Որ տանը ուտելու բան չկար,- դառնորեն պատասխանեց Ընկերս և հուզված շարունակեց,- սովից մեռնեմ էլ, միևնույն է, այդպիսի բան չեմ անի, և գիտե՞ս ինչու: Որովհետև չեմ կարող պատկերացնել, որ կգա մի օր, երբ ստիպված կլինեմ բացատրել երեխայիս, որ սրիկա եմ, հրեշ: Որ այն հայրիկը, որին նա սիրում ու հավատում է իր ողջ սրտով, կենդանի, բաբախող սրտով, ոչ թե անոթում փակված մի մահացած, սպանված օրգանով, որ այդ սիրելի հայրիկը մարդասպան է:
- Պետությունը պիտի վերահսկի այսպիսի… բաները,- ես ուրիշ բառ չգտա:
- Պետությո՞ւնը,- արցունքների միջից դառը ծիծաղեց նա: - Ի՞նչ պիտի անի պետությունը, եթե քաղաքի կենտրոնական շուկայի ամենանկատելի վայրում դրված է մի ցուցանակ, որին գրված է՝ «Կյանք եմ վաճառում»: Ո՜չ, մարդկային խիղճն է այն միակ Պետությունը, որ կարող է այս ամենը վերահսկել: Եթե ամեն մեկն իմանա՝ որքան արժե Մարդկային սիրտը, իր սիրտը, երբեք ոչ ոք չի հանի ուրիշինը և չի դնի փոշոտ անոթի մեջ: Գուցե միայն այն պատճառով, որ այդ նույն անոթում կարող է հայտնվել իր սեփական սիրտը, կամ, ինչն ավելի սարսափելի է, իր զավակի փոքրիկ սրտիկը:

Սոնա Արսենյան
«Խնկո Ապեր»

Նամակ

«… Գիտե՞ս՝ այն օրվանից անցել է արդեն տասներկու տարի:
Շատ բան է փոխվել իմ կյանքում: Հիմա ընտանիք ունեմ, ունեմ երկու երեխա, միշտ մտածել եմ, թե երեխաներիս հայրը դու ես լինելու, հենց դու: Հիմա ունեմ սիրող ամուսին, որը փրկեց ինձ ու կյանք վերադարձրեց… Քեզ մոռացել եմ, հավատա՛, էլ ոչինչ չի մնացել, ուղղակի ուզում եմ իմանաս, ուղղակի ինքս էլ գիտեի, որ մի օր պետք է գրեմ: Մեյլդ գիտեի… գիտեի, որ չի փոխվի:
Սկսեմ սկզբից… Սիրում էի քեզ անսահման, ապրում էի քեզնով, չնայած որ չափից շատ էիր նեղացնում: Գիտե՞ս՝ շատ եմ ուզել քեզ թողնել, բայց չեմ կարողացել, միշտ մտածել եմ, թե իրավունք չունեմ… միշտ կողքիդ եմ եղել, փորձել եմ մեջք լինել, ուժ տալ… Բայց դու այդ ամենը չգնահատեցիր: Ես դարձել էի քո աղախինը: Չէ՛, ես հաճույքով էի քո մասին հոգ տանում, կարծես կինդ լինեի, բայց դու անտեսում էիր, դու ուրիշներին ավելի էիր գնահատում: Ես քեզ տվեցի ամենը, ինչ ունեի, իսկ ի՞նչ ստացա փոխարենը…
Հետո մի օր եկար և ասացիր, թե պիտի Մոսկվա գնաս, կանչել են, ասացիր, եթե ուզեմ, կարող եմ հետդ գալ…: Բայց ինձ ծնողներս հենց էնպես քեզ հետ չէին թողնի, նույնիսկ նշանված չէինք, ու ինձ ասացիր, որ որոշեմ:
Ես նամակ գրեցի ծնողներիս ու փախա քեզ հետ: Գիտեի՝ հայրս կբարկանա, մորս կմեղադրի, ախր, հասկանում էի, որ սխալ եմ գործում ծնողներիս հանդեպ: Թողեցի ողջ կյանքս ու եկա քեզ հետ: Ինքնաթիռ երկուսս էլ առաջին անգամ էինք նստում: Տխուր նստած էի, շոյեցիր ու համբուրեցիր: Ասացի, որ երբեք մենակ չթողնես ինձ ու էնպես չանես, որ զղջամ արածիս համար: Հիշում եմ բառերդ… ասացիր, որ կեսդ եմ ու միակ մարդը, ով միշտ հավատացել է քեզ, խոստացար երջանկացնել, միայն թե, ինչպես վաղուց խոստացել էի, քեզ մենակ չթողնեմ: Մեզ համար տուն էին վարձել, հարմարավետ էր ու մերն էր՝ երկուսինս: Երջանիկ էի, որ քոնն եմ ու դու էլ՝ իմը… Կարծես մեր մեղրամիսը լիներ, չնայած շատ էի մտածում ծնողներիս մասին: Ասել էիր, թե կարող եմ մի քանի օրից զանգել նրանց: Անհամբեր սպասում էի այդ օրվան, հանգստացնում էի ինձ, որ միասին ենք, որ ճիշտ եմ արել, որ քեզ մենակ չեմ թողել, որ գաս ընկնես ռուսների ճանկը… Եվ հետո քեզ ո՞վ պիտի խնամեր…
Էդպես սկսվեց մեր նոր կյանքը. դու գնում էիր քո գործերով, ես սպասում էի քեզ, սկզբում շուտ էիր գալիս, հետո… Հետո մի օր եկար, ասացիր, որ վերցնեմ տվածդ փողը ու ետ գնամ Երևան՝ ծնողներիս մոտ: Մեկ ամիս էր անցել ընդամենը, իսկ դու ասացիր, թե քեզ ավելորդ բեռ պետք չէ, որ հոգնել ես ամուսնական կյանքից, որ հոգնել ես ամեն օր շուտ տուն վերադառնալուց, որ պետք է գործով ուրիշ քաղաք գնաս, եկել ես իրերիդ ետևից ու տոմսս արդեն առել ես:
Թողեցիր ու գնացիր… Գիտե՞ս՝ չեմ ուզում ասել, թե ինչ եմ զգացել: Գնալուցդ հետո երևի խմել էի: Ամեն ինչ աղոտ եմ հիշում: Վատն այն էր, որ ինքնաթիռս բաց էի թողել: Մտա մոտակա սրճարաններից մեկը ու էնտեղ հանդիպեցի նրան, ով կյանքս դժոխքի վերածեց: Սուրճ պատվիրեցի, նստած էի, մի երիտասարդ մոտեցավ. հայ էր: Գիտե՞ս՝ շատ էի մենակ ու կիսվեցի, պատմեցի հետս պատահածի մասին, ուզում էի խոսել, հասկանո՞ւմ ես… Հիմա կասես՝ թեթևաբարո, սրա-նրա հետ իմ կյանքից եմ խոսում, բայց չէ՞ որ դու խաբեցիր, գիտես, թե

ի՞նչ էի զգում, դու գիտե՞ս, թե զգացմունքն ինչ է…
Խոստացավ օգնել ինձ, աշխատանք առաջարկեց: Ես չէի կարող ետ գնալ. ո՞նց էի նայելու ծնողներիս աչքերի մեջ… Համաձայնվեցի: Նա անձնագիրս վերցրեց, որ աշխատանքային պայմանագիր կազմի, հյուրանոցում համար վարձեց, իսկ առավոտյան պարզվեց, որ բանտում եմ… Չեմ ուզում պատմել, թե ի՛նչ դժոխքի միջով եմ անցել, ինչե՛ր եմ ապրել… Չեմ ուզում՝ լսես տառապանքիս մասին, դու ինձ միշտ ուրախ ես սիրել: Միայն ասեմ, որ այդ դժոխքը տևեց կես տարի: Հետո այդ որոշը բացահայտեցին, ինձ ետ ուղարկեցին Հայաստան: Ու գիտես՝ ինչն էր ցավեցնում, որ ինձ նայում էին այնպես, ինչպես ես ու դու ժամանակին նայում էինք քո Արևիկներին, Անիներին ու Լիլիթներին…
Չգիտեմ՝ հիմա երջանի՞կ ես, թե՞ չէ… բայց իմ ապրումներն ու կյանքը շատ բան սովորեցրին… Հասկացա՝ որն է երջանկությունը…, երբ… երբ վեր ես հառնում մոխիրներից, երբ քեզ սիրում են այնպիսին, ինչպիսին կաս:
Հավատա՝ նույն բանը կարող է հենց քո, բոլորիս գլխով անցնել… Ոչ ոք ապահովագրված չէ… Դրա համար նախևառաջ հուսալի՛ եղիր և համոզվի՛ր, որ կողքինդ հուսալի է: Մնաս բարո՛վ»:

Արմինե Մանուկյան
«Շավիղ»